և ետ ընթեռնուլ դատաւորին , և ապա ամբաստան եղեւ զՊատրիարքէն Յունաց , թէ ո՞րպէս մինչ հրամանաւ՝ առանց գիտութեան ուրուք՝ գաղտնապէս խափանել կամի զհին գրեանս Հայոց , եւ դատաւորն ոչ արձանագրեաց զհրովարտակն 'ի դատարանի ։ Տեսեալ Յունաց թէ 'ի դերեւ ել յոյս խարեանց և յայտնեցան նենգութիւնք նոցին , զիջան դարձեալ ըստ առաջին սովորութեան ընդ Հայոց 'ի միասին մտանել 'ի Գերեզման 'ի նոյն աւուր , և դատաւորն գրեաց երկաքանչիւրոց մէն մի Հէօճճէթս և արձակեաց ։

Այլ Յովհաննէս Պատրիարք կասկածեալ ընդ յեղյեղուկ բանս Յունաց , պատրաստեալ զկարեւոր գրեանս՝ ազդարար 'ի Կոստանդնուպօլիս տիրացու Ալեքսան փոխանորդին իւրոյ , և առաքեաց զայն 'ի ձեռն հաւատարմին իւրոյ՝ պատուիրելով նորոգել զհրովարտակն վասն Ծրագալուցի Զատկին՝ և խափանել զՅունացն և հաստատել զայն յԵրուսաղէմ նախ քան զպասեքն , զի մի դաւ ինչ գործեսցի 'ի Յունաց , (1692) ։

Իսկ այլազգիք Երուսաղէմի , որոց երկրորդ բնութիւն լեալ էր ագահութեամբ և պէսպէս բարբանօք կորզել ըզդրամս 'ի քրիստոնէից , դարձեալ բանացան 'ի վերայ միաբանացն Հայոց 'ի պատճառս նորոգութեան Ս. Փրկչի վանաց՝ զի ոմանք ասէին թէ աւելի քան զհրամայեալն շինեալ են զաւելորդ իրս , ոմանք թէ հակառակ է օրինաց մերոց , և այլք զայլ իմն բանս յօդէին ։ Զի թէպէտ Յովհաննէս Պատրիարք և միաբանք իւր բազում անգամ չոքան 'ի դատարան՝ և առաջի արարին զգիրս քննութեանց դատաւորաց , եւ զվճիռ դենպէտին , զի համաձայն նոցին աւարտեալ էր շինուածն , այլ ոչ կամէին անսալ նոքա 'ի թոյլտուութենէ դատաւորաց , այլ հանապազ յուզէին եւ յարուցանէին զաղմուկս վասն դրամոց ։ Տաղտկացեալ Յովհաննու Պատրիարքի 'ի բանութեանց աստի , գրեաց գիր աղաչանաց առ Եպարքոսն , և առաքեաց զայն 'ի բանակն արքունի յԱդրիանուպօլիս , և խնդրեաց բառնալ զնեղութիւնս այլազգեաց , զի ամենայն դատաստանք և գործք աւարտեալ էին օրինօք դատարանի ։ Գրեցաւ հրովարտակ առ քաղաքապետն և առ դատաւորն Երուսաղէմի , խափա-